ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 4-8-ը Ղազախստանի Հանրապետություն /Ալմաթի/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի), 2023թ. դեկտեմբերի 4-8-ը

3.Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից համատեղ կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար «Վիճակագրական կազմակերպության կառավարումը՝ փոփոխությունների ժամանակաշրջանում» խորագրով համաժողովին:

Համաժողովը տարածաշրջանային համաժողովների շարքի մի մասն է՝ հասկանալու և առաջնահերթություն տալու վերջին ինստիտուցիոնալ, կազմակերպական և տեխնիկական զարգացումներին՝ պաշտոնական վիճակագրության և ցուցանիշների արտադրության համար 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի և հարակից տարածաշրջանային և ազգային զարգացման ծրագրերի մոնիտորինգի համար:

Համաժողովն անդրադարձավ վիճակագրական կազմակերպությունների առաջացող կարիքներին, ինչպես ընդգծված է Կայուն զարգացման տվյալների համար Քեյփթաունի գլոբալ գործողությունների ծրագրում (CTGAP) և Պաշտոնական վիճակագրության փոխակերպման օրակարգի համաժողովների շարքի վերջնական զեկույցում, ինչպես նաև տրամադրեց տեղեկատվություն փորձառությունների և մարտահրավերների մասին, որոնք կարող են նպաստել ընդլայնված գիտելիքների բազային կապված Վիճակագրական կազմակերպության նոր Ձեռնարկի հետ:

Տարածաշրջանային մոտեցումը շեշտը դրեց այն ասպեկտների վրա, որոնք բնորոշ են Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանին և ներկայացրեց ընդհանուր մարտահրավերները:

Այս թեմատիկ համաժողովը համախմբեց ազգային վիճակագրական գրասենյակների բարձր մակարդակի ներկայացուցիչներին՝ ազգային վիճակագրական համակարգում ռազմավարական դերակատարում ունեցող

գլխավոր վիճակագիրներին ու ավագ մենեջերներին, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին:

5.Քննարկված թեմաները՝

Համաժողովին քննարկվեցին հետևյալ թեմաները՝ Ազգային վիճակագրական համակարգերի կառավարման և կազմակերպման ձեռնարկի նախապատմություն, Կառավարում և նորարարություն վիճակագրական համակարգերում, Կառավարում, գործընկերություն և ներգրավվածություն սպառողների և տվյալների համայնքի հետ, Տվյալների կառավարման վերաբերյալ վերջին միջազգային զարգացումներ, Սպառողների ներգրավվածություն և համագործակցություն տվյալների համայնքի հետ, Տվյալների նորարարական աղբյուրներ և որակի կառավարում, Տվյալների նորարարական աղբյուրների օգտագործման գլոբալ նախաձեռնություններ, որակի խնդիրներ, Ռեսուրսներ և կարողությունների զարգացում, Գլոբալ և տարածաշրջանային նախաձեռնություններ. Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ. վերանայում, արդիականացում և համապատասխանություն փոփոխվող միջավայրերում, Առաջընթաց «Պաշտոնական վիճակագրության մասին» ընդհանուր օրենքի (GLOS) վերանայման ուղղությամբ, Ռեսուրսներ և աջակցության կարիք. երկրին հատուկ մարտահրավերներ, հաջողված պատմություններ և զարգացման ծրագրեր:

Երկրները ներկայացրեցին տեղեկատվություն օրակարգի թեմաների վերաբերյալ՝ շեշտը դնելով ազգային նախաձեռնությունների, լավագույն փորձառությունների, մարտահրավերների, քաղված դասերի և հետագա քայլերի վրա:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին ներկայացվեցին տարածաշրջանային նախաձեռնությունները և փորձը խնդրո առարկա հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպվեցին խմբային քննարկումներ օրակարգի թեմաների շուրջ և ներկայացվեցին հաշվետվություններ լիագումար նիստերում՝ խմբային քննարկման արդյունքների մասին:

Հայաստանը համաժողովին ներկայացրեց իր փորձը քննարկված թեմաների վերաբերյալ:

«Սպառողների ներգրավվածություն և համագործակցություն տվյալների համայնքի հետ» խորագրով նիստի մոդերատորը Հայաստանն էր:

Հայաստանը նաև «Ռեսուրսներ և աջակցության կարիք. երկրին հատուկ մարտահրավերներ, հաջողված պատմություններ և զարգացման ծրագրեր» թեմայով պանելային քննարկման մասնակից էր:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովն օգտակար էր Ազգային վիճակագրական համակարգերի ինստիտուցիոնալ և կազմակերպական շրջանակների ստեղծման և ամրապնդման, որակի կառավարման, սպառողների կարիքների ուսումնասիրման և նրանց աջակցության, տվյալների նոր աղբյուրների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման տեսանկյունից պաշտոնական վիճակագրությունում:

Հայաստանը կրկին դիմեց ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովին Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հաջորդ փորձագիտական գնահատումն անցկացնելու խնդրանքով (2014թ. Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատում (http://www.armstat.am/file/doc/99487953.pdf), 2018թ. Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատում (https://www.armstat.am/file/doc/99517703.pdf)), ինչպես նաև ցուցաբերելու աջակցություն՝ Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդելի (GSIM) և Ընդհանուր վիճակագրական արտադրության ճարտարապետության (CSPA) մոդեռնիզացման գործիքների ներդրման ուղղությամբ:

Ղրղզստանի Հանրապետության Ազգային վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների խնդրանքով պայմանավորվածություն ձեռք բերվեց հյուրընկակել Ղրղզստանի Հանրապետության Ազգային վիճակագրական կոմիտեի պատվիրակությանը՝ Հայաստանի փորձը ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) ներդրման և դրա հիման վրա որակի հաշվետվությունների կազմման աշխատանքները ներկայացնելու նպատակով:

Մոնղոլիայի ազգային վիճակագրական գրասենյակի ներկայացուցիչների խնդրանքով պայմանավորվածություն ձեռք բերվեց կիսվելու Հայաստանի փորձով Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM) և Վիճակագրական կազմակերպությունների համար Ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ներդրման վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը համաժողովին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին քննարկելու Ազգային վիճակագրական համակարգերի ինստիտուցիոնալ և կազմակերպական շրջանակների ամրապնդման, վիճակագրական տեղեկատվության որակի ապահովման, վիճակագրական կարողությունների զարգացման հետ կապված

խնդիրները, ինչպես նաև առաջնորդության, համակարգման և հաղորդակցության ամրապնդման վերջին միտումներն ու առաջնահերթություններն արագ փոփոխվող տվյալների էկոհամակարգում:

Համաժողովի արդյունքները տրամադրեցին ուղեցույց և լավագույն փորձառություններ՝ ազգային վիճակագրական համակարգը ժամանակակից, առավել ինտեգրացված և համակարգված դարձնելու համար:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

11.12.23թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – Հայաստանի Հանրապետության Վարչապետի 24.11.23թ. թիվ N 1182 – Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը - Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի)

5. Գործուղման ժամկետները՝ 2023թ. 2023թ. դեկտեմբերի 4-8-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար

Ա. Հայրապետյան

11. 12. 23թ